Վաղատին

Բնակչություն՝ 631

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 118 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 14 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1580 մ,

Գյուղը հիշատակվում է 12-13-րդ դարերում՝ Ստեփանոս Օրբելյանի կողմից: Գյուղի մասին խոսում է նաև Ղևենդ Ալիշանը՝ օգտագործելով Վաղադին տարբերակը: 1990թ-ին ՀԽՍԽ Գերագույն խորհրդի կողմից հաստատվեց անվան Վաղատին տարբերակը:
Վաղատինը միջնադարում եղել է գրչության կենտրոն: Այստեղ ապրել և ստեղծագործել է ժամանակի մեծ մտածող Հովնան Որոտնեցին: Գրիգոր Տաթևացին գյուղի շրջակայքում գտնվող Որոտնավանքում լատիներենից թարգմանել է Պետրոս Արագոնացու «Գիրք առաքինությանց» աշխատությունը:
Գյուղի շրջակայքում գտնվող նշանավոր պատմական հուշարձանը Որոտնավանքն է: Ղևոնդ Ալիշանը ևս նշում է այս վանքի մասին՝ անվանելով այն Վաղատնի վանք: Վանքը կառուցել է Սյունյաց Շահանդուխտ թագուհին՝ 1000թ., իսկ շինարարությունը ավարտել է նրա որդի Սևադան: Նշանավոր է նաև վանքի գավթում 1007թ կառուցված ս. Կարապետ եկեղեցին:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 277գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 330 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 1378գլուխ,
- խոզեր՝ 50գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 425:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 470հա աշնանացան

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 3984 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3883 հա, որից՝
- վարելահող՝ 828 հա, բազմամյա տնկարկ՝ 26 հա, խոտհարք՝ 28 հա, արոտ՝ 1945 հա, այլ հողատեսք՝1056 հա
- բնակավայրերի հողեր՝ 53 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 15 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝10 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 21 հա,
- ջրային հողեր՝ 3 հա